Ալեքսանդր Ծատուրյան

Միթե արդեն, ո՞վ ընկեր իմ, հոգնեցար . . .

Մի՞թե արդեն, ո՞վ ընկեր իմ, հոգնեցար
Դու տանջանքի ճնշող լուծը կրելով.
Որ այժըմ թույլ, սրտով հիվանդ, ցավագար
Մահ ես խնդրում կյանքից երես դարձնելով:

Չէ՞ որ, ընկե՛ր, դու անձնուրաց երդվեցիր
Խեղճ եղբորդ վերջին շունչըդ զոհելու,
Եվ կյանքի մեջ արի զինվոր գրվեցիր,
Մինչ գերեզման չարության դեմ կռվելու:

Ո՞ւր է պայծառ, ջերմ արևը փրկության,
Որ թշվառին ազատ գարուն ավետեր.
Օ՛հ, ընկե՛ր իմ, կոպիտ ձեռքը չարության
Դեռ անողորմ կաշկանդում է շատ զոհեր...

Արիացի՛ր, ի՛մ մտերիմ, դեռ ապագան ցանկալի
Առա՛տ արյուն, շա՛տ զոհեր է պահանջում.
Տանջվի՛ր, ուրախ բարեկամը թշվառի
Տանջանքումն է յուր պըսակը որոնում...

1890, 7 հոկտեմբերի